

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**  
**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔԱԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**  
**ՈՐՈՇՈՒՄ N 43/3**

ք.Երևան

20 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 19.04.2018թ. N4100709 վարչական ակտի դեմ Ա/Ձ Լուսինե Սողոմոնյանի դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

Ա/Ձ Լուսինե Սողոմոնյանի կողմից դիմում-բողոք է բերվել ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 19.04.2018թ. N4100709 վարչական ակտի դեմ, որով կիրառվել է ՀՀ Հարկային օրենսգրքի 416 հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված պատասխանատվության միջոցը:

ՀՀ Հարկային օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի ընդունած և ուժի մեջ մտած անհատական իրավական ակտը կարող է բողոքարկվել այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 19.04.2018թ. N4100709 վարչական ակտը ուժի մեջ է մտել 23.04.2018 թ., սակայն դրա դեմ բողոքը տրվել է 06.07.2018թ.՝ վերագրյալ իրավանորմով նախատեսված երկամսյա ժամկետի խախտմամբ:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը ներկայացվել է Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Լուսինե Սողոմոնյանի կողմից բաց է թողնվել ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 19.04.2018թ. N4100709 վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկելու ժամկետը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Ա/Ձ Լուսինե Սողոմոնյանի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:  
Սույն որոշմանը չհամաձայնելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ**



**Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ**